ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Սեպտեմբերի 2ին Ստեփանակերտում տեղի ունեցաւ ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան՝ բոլոր մակարդակների պատգամաւորների մասնակցութեամբ։

Նստաշրջանը ընդունեց որոշում եւ հռչակագիր։

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամաւորների մասնակցութեամբ ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի 1991թ. Սեպտեմբերի 2ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ստեղծման հռչակագրի ընդունման եւ նրա պետական իշխանութեան ու կառավարման ժամանակաւոր մարմինների կազմաւորման մասին

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամաւորների մասնակցութեամբ ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, արտայայտելով ժողովրդի կամքը, որը վաւերացուած է փաստօրէն անցկացուած հանրաքուէում եւ ԼՂԻՄի ու Շահումեանի շրջանի իշխանութեան մարմինների 1988-1991թթ. որոշումներում, նրա ազատութեան, անկախութեան, իրաւահաւասարութեան եւ բարիդրացիութեան ձգտումը, ղեկավարուելով քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային ոլորտների զարգացման հարցում ամբողջ բնակչութեան շահերով, հայ ժողովրդի միասնութեան ձգտումը համարելով բնական եւ օրինական, միջազգային իրաւունքի նորմերին համապատասխան, որոշեց.

1. Հռչակագիր ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եւ դրան կից Շահումեանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն (ԼՂՀ) հռչակելու մասին։

2. ԼՂԻՄի ժողովրդական պատգամաւորների մարզային խորհուրդը եւ նրա գործադիր կոմիտէն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական իշխանութեան ու կառավարման ժամանակաւոր բարձրագոյն մարմին համարել մինչեւ համաժողովրդական ընտրութիւնների անցկացումը եւ իշխանութեան ու կառավարման նոր հանրապետական մարմինների կազմաւորումը։

3. Ժողովրդական պատգամաւորների մարզային խորհրդի գործկոմին յանձնարարել՝ լայն հասարակայնութեան ներգրաւմամբ նախապատրաստել եւ մարզային խորհրդի քննարկմանը ներկայացնել ԼՂՀ պետական իշխանութեան կառավարման մարմինների կառուցուածքի ու պարտականութիւնների մասին կանոնադրութիւն։

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքում մինչեւ ԼՂՀ սահմանադրութեան եւ օրէնքների ընդունումը գործում են ԽՍՀՄ սահմանադրութիւնն ու օրէնսդրութիւնը, ինչպէս նաեւ ներկայումս գործող միւս օրէնքները, որոնք չեն հակասում սոյն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին եւ հանրապետութեան առանձնայատկութիւններին։